ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 010-594018
Էլ. Փոստ՝ nune.khachatryan@justice.am

№ _____
« »_____2018թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ԾՈՒԾԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
/ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ/

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 23.05.2018թ. թիվ 330-ի 9 գրության՝ տեղեկացնում ենք, որ համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու և նշված օրենքի 12^2-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում նշանակում չկատարվելու դեպքերում աշխատակազմի ղեկավարն այդ մասին գրավոր տեղեկացնում է քաղաքացիական ծառայության խորհրդին:

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում այն համալրվում է օրենքով սահմանված մրցության կարգով («Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 12^1 և 14-րդ հոդված): Մրցույթի մասին հայտարարությունը տեղադրվում է ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայք էջում (moj.am), ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի (www.csc.am) պաշտոնական կայք էջում, ինչպես նաև հրապարակվում է «Հանրային ծառայություն» շաբաթաթերթում:

Կից ներկայացվում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների ցուցակը:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ՆՈՒՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատ. Ն. Սեդրակյան
Հեռ.010-59-40-57